ԼՐԱՏՈՒ

ՔԱՐԱՇԱՄԲԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ № 117 ԴԱՄԲԱՐԱՆԸ

ՀՍՍՀ Նախիջևանի շրջանի Քարաշամբ գյուղից հարավ-արևելք, Հրազդան գետի աջ, բարձրագիր ափին գտնվում են բրոնզեդարյան ամրոց ու դամբարանադաշտ[1]։ Ամրոցից մոտ 100 մ հյուսիս-արևմուտք, Հրազդանի ձախ ափի հրվանդանի վրա պահպանվել են նույն ժամանակաշրջանի մեկ այլ ամրոցի հետքեր։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման ու օգտագործման վարչության հնագիտական արշավախումբը 1981—83 թթ. պեղումներ կատարեց դամբարանադաշտի հարավային հատվածում[2], որտեղ պեղվեցին մոտ 200 տարբեր մեծության հիմնահողային դամբարաններ։ Հայտնաբերված նյութերը ցույց են տալիս, որ դամբարանադաշտի տվյալ հատվածը գոյատևել է միջին բրոնզի գարաշրջանից մինչև երկաթի դարի վաղ փուլը (մ. թ. ա. XVII—IX դդ.)։

Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ նյութական մշակույթի արժեքներ՝ գունազարդ, սև փայլեցված ու «խոհանոցային» բազմատեսակ խեցանոթներ, բրոնզից զենքեր, քարե գլանաձև կնիք, մետաղից, քարից, մածուկից պերճանքի բազմաթիվ առարկաներ և այլն։ Դամբարանները արժեքավոր նյութ են տալիս բրոնզեդարյան ժամանակաշրջանի տեղաբնիկների հոգևոր ու պաշտամունքային կյանքի որոշ կողմերի մասին։

Թաղումներն անհատական են։ Բացառություն են կազմում № 21, 66 և 117 դամբարանները, որտեղ դիտվում էին խմբակային թաղումներ։ Դամբարանների յուրատիպ օրինաչափություններից էր կմախքների բազմաթիվ մանրամասների բացակայությունը, հանգուցյալների ոսկորները հաճախ կոտրված էին և անշատված իրարից, օրինաչափ էր ծնոտների բացակայությունը կամ գանգերից հեռու գտնվելը, որ, հավանաբար, կապված է դիամասնատման հետ։

Դամբարանների զգալի մասի խցերը լցված էին տարբեր հաստության և ամրության կավալուծույթի շերտով։ Նման երևույթ դիտվել է նաև Վերին Նավերի միջին բրոնզի գարին վերաբերող դամբարաններում[3]։ Կավալուծույթի և ծածկասալերի միջև եղած տարածությունը լցված էր քարախառն հողով։ Դամբարանները մեծ մասամբ ծածկված էին տարբեր չափի ու քանակի բազալտե տափակ սալերով, սակայն որոշ դամբարաններ ունեին մանր, անմշակ քարերից, հաճախ վարդյակի տեսքով շարված ծածկեր։

Քարաշամբի դամբարանադաշտի հարավային հատվածում պեղված դամբարաններից իր չափերով, կառուցվածքային յուրահատկություններով, թաղման ծեսով և նյութով առանձնանում է № 117 դամբարանը։ Արտաքինից այն ձվաձև, քարահողային լիցքով դամբարանաբլուր էր (երկ.՝ 6,8 մ, լայն.՝ 5,3 մ, բարձր.՝ 1 մ)՝ շրջագծված կրոմլեխով։ Դամբարանախուցը ծածկող երեք խոշոր բազալտե սալերը 0,6—0,8 մ խորության վրա էին։ Սալերի վրա գտնվեցին վաղ երկաթի դարին վերաբերող կավանոթների բեկորներ և կենդանիների ոսկորներ, որոնք վկայում են հոգեհաց տալու մասին։ Դամբարանախուցը հիմնահողային էր, սպիտակահողով լցված, հյուսիսից հարավ ուղղված (երկ.՝ 4,3 մ, լայն. հարավային մասում՝ 1,2 մ, հյուսիսային մասում՝ 1,5 մ, խորութ.՝ 1,7 մ)։

Պեղումները ցույց տվեցին, որ դամբարանը կրկնակի թաղումով էր. ստորին թաղումը վերաբերում էր ուշ բրոնզի դարաշրջանի առաջին փուլին, իսկ վերինը՝ վաղ երկաթի ժամանակաշրջանին։ Երկրորդ անգամ թաղում կատարելու համար ծածկի հյուսիսային և կենտրոնական սալերը տեղահանվել են, իսկ հարավային սալի տակ, խցի կենտրոնական մասում, կառուցվել է խոշոր, անմշակ քարերով շարված պատ (բարձր.՝ 1,5 մ, լայն.՝ 0,9 մ), որը խուցը բաժանել է երկու մասի։ Երկրորդ թաղման համար, հավանաբար, ամբողջ դամբարանախուցն օգտագործելու կարիք չի եղել և նրա հյուսիսային մասն ան-

---

1 Այստեղ 1966 թ. հետախուզական պեղումներ է կատարել Լ. Կարապետյանը։ Տե՛ս Լ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Բրոնզի դարի և վաղ երկաթի նոր հուշարձան Հրազդան գետի ավազանում [«Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1969, № 4, էջ 278—283]։

2 Դամբարանադաշտի հյուսիսային մասում և ամրոցում պեղումներ է կատարել ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը։

3 А. С и м о н я н, Могильник эпохи бронзы Верин Навер («Краткие сообщения Института археологии», № 176, М., 1983, с. 91).

տավել է պատով, որպեսզի մնացած մասի փրխրուն հողը նոր խուցը չցվի։ Երկրորդ (վերին) թաղման խցի հատակը պատված էր անմշակ քարերի մեկ շարով։ Նույնատիպ քարե շարվածքով հատակ հանդիպում է վաղ երկաթի դարաշրջանի այլ թաղումներում (Վարդաքար)[4]։ Այդ հատակի և խուցը կիսող պատի տակ եղած 0,2—0,3 մ հաստություն ունեցող լիցքի շերտը հեռացնելուց հետո բացվեց ստորին, հիմնական թաղումը (տե՛ս խցի գծանկարը)։

Ննջեցյալի ոսկորները բացակայում էին։ Խցի հյուսիսային և կենտրոնական մասերից գտնվեց թաղման ուղեկցող նյութը, այն է՝ բրոնզե դաշույն իր պատյանով, հինգ կայծքարե նետասլաքներ, բրոնզե զարդեր, տարբեր իրերի բեկորներ և կավանոթներ։ Դաշույնը միաձուլ է, խողովակաձև դաստակով, եռանկյունաձև շեղբով (աղ. 1, նկ. 1)։ Դաստակը սնամեջ է, լցված ամուր զանգվածով և ավարտվում է կիսագնդաձև գլխիկով։ Այն զարդարված է համակենտրոն ներքկված շրջագծերով, եռանկյունաձև անցքերով, խալով, որոնք միասին կազմում են արևը խորհրդանշող մի պատկեր[5] (աղ. 1, նկ. 2)։ Դաստակի կենտրոնական նեղացող մասում կան բարձրաքանդակ գոտի և եռանկյունաձև կտրվածք։ Հիմքում լայնանալով՝ դաստակը սահուն վերածվում է խաչարդի և ամուր գրկում շեղբի ուսերը։ Շեղբի ողջ երկարությամբ անցնում են ողեր, որոնք, ծայրին չհասած, միանում են։ Դաշույնի երկարությունը 42 սմ է, շեղբինը՝ 30,5 սմ, լայնությունը հիմքի մոտ՝ 8 սմ։ Դաշույնը դրված էր շքեղ ձևավորված պատյանի մեջ։ Պատյանը բրոնզից է, երկմասանի, յուրաքանչյուր մասը՝ միաձուլ։ Առանձին մասերը միացվում էին փայտե կաշեպատ հիմքին (աղ. 1, նկ. 3)։ Պատյանի մետաղե երկու մասերն էլ պատված են եռանկյունաձև և սեպաձև անցքերի



Խցի գծանկարը։

շարքերով, ընդ որում, գիմային լողմի եռանկյունիներն ավելի փոքր են, քան հակառակ երեսինը։ Պատյանի ստորին մասն ավարտվում է փոքրիկ միջանցիկ անցք ունեցող սկավառակով, որը կարվել է գգեստին։ Հայաստանի և հարևան երկրներե մի շարք հուշարձաններում (Լճաշեն[6], Արթիկ[7], Նորատուս[8], Էլառ[9], Թբելի դամբարանադաշտ[10], Կորնիսի[11] և այլն) նմանօրինակ միաձուլ դաշույններ հայտնի են սկսած մ. թ. ա. XIV դարից մինչև մ. թ. ա. I հազարամյակի

---

[4] Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 16.

[5] С. Есаян, Амулеты, связанные с культом солнца из Армении [«Советская археология» (այսուհետև՝ СА), 1968, № 2, с. 257].

[6] А. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан (СА, 1957, № 2, с. 152.

[7] Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 176—177։

[8] А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 155.

[9] Է. Խանզադյան, Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 82։

[10] «Тбилиси. Археологические памятники—I», Тбилиси, 1978, табл. XXXIX-620.

[11] Б. Куфтин, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, 1949, с. 27—28. табл. IX-2.



Աղյուսակ 1. Հիմնական թաղման նյութերը։

.ակիզբը։ Քարաշամբի դաշույնն իր տեսքով շատ -է նմանվում Այրիվանքի № 3 կրոմլեխի դաշույնին, որը, սակայն, 10 սմ-ով կարճ է մեր օրինակից[12]։ Հայաստանի ուշ բրոնզի դարաշրջանի միաձույլ դաշույնների հետ հաճախ հանդիպում են մոմե նուրբ կաղապարների մեջ ձուլված ցանցկեն պատյաններ[13]։ Ցանցկեն պատյաններով երեք դաշույն են հայտնի Լճաշենի երկրորդ դամբարանթմբից, որը թվագրվում է մ. թ. ա. XIV—XIII դդ.[14]։ Նմանօրինակ պատյաններ հանդիպում են նաև ավելի ուշ, մ. թ.ա. XII—XI դդ. (Կիրովականի Դիմաց թաղ)[15]։ Դատելով հրատարակված նյութերից՝ Քարաշամբի № 117 դամբարանի հիմնական թաղման դաշույնի երկ-

---

12 С. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, с. 64.

13 Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, 1969, էջ 29։

14 А. Мнацаканян, նշվ. աշխ., էջ 157։

15 С. Есаян, Оружие и военное дело древней Армении, с. 66.

մասանի պատյանը այս տիպի եզակի օրինակներից է Հայաստանում։

Գտնված 5 կայծքարե նետասլաքները նշաձև են, սուր, հարդարված ծայրերով, հիմքում ունեն խորը, ուղղանկյունաձև, կլորացող փորվածքներ՝ փայտե ձողին ամրացնելու համար (աղ. 1, նկ 9)։ Նմանօրինակ նետասլաքների բաղմաթիվ նմուշներ հայտնի են Հայաստանի բրոնզի և երկաթի դարի հուշարձաններից (Լճաշեն, Կամո, Ռեգկին լադեր, Կարմիր բլուր և այլն)[16]։ Զենքերի թվին կարելի է դասել բրոնզե, սնամեջ, կտրվածքում կլոր կիսախողովակը (աղ. 1, նկ. 7)։ որը, հավանաբար, ծառայել է որպես նիզակի փայտե կոթի ծայրակալ։

Զարզարանքի առարկաներից են բրոնզե ուղղանկյունաձև կամրջակով ուռուցիկ կոճակը (աղ. 1, նկ. 4)։ կենտրոնական մասում ծակված բրոնզե լարն ու բարակ թիթեղը, որոնք, հավանաբար, ծառայել են որպես ամրակներ (աղ. 1, նկ. 5, 6)։ Դամբարանում գտնվել է նաև բրոնզե ծալված ծայրերով պայտաձև շիգղ, որի միացնող ձողիկը չի պահպանվել (աղ. 1, նկ. 8)։ Շիգղերը Հայաստանում լայն տարածում են գտնում մոտավորապես մ. թ. ա. XI դարից և հայտնի են մ. թ. ա. II—I հազարամյակների շատ հուշարձաններից (Մեծամոր[17], Դիլիջան[18], Կարմիր բլուր[19] և այլն)։ Քարաշամբի № 117 դամբարանից գտնված շիգղը Հայաստանի վաղագույն օրինակներից է և ընդհանրություններ ունի Գազայի (Պաղեստին) մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսի թաղումներից հայտնաբերված շիգղերի հետ[20]։

Հիմնական (առաջին) թաղմանն ուղեկցող նյութի մեջ առանձին տեղ է գրավում խեցեղենը՝ սև փայլեցված, գծային, ալիքաձև ու եռանկյունաձև, խորագիր զարդերով ու փայլանախշով սափորներն ու քրեղաններ։ Ողջ խեցեղենը բարձրորակ է, հոյակապ կոկած։ Նրա զգալի մասի վրա (աղ. 1, նկ. 10—13, 15, 16) պահպանվել են սպիտակ և կարմիր մածուկով արված մեանդրերների ու ալիքաձև գծերի հետքեր։ Իրենց ձևերով, փայլեցման եղանակով ու զարդամոտիվներով այս կավանոթները մոտ են ուշ բրոնզեդարյան հուշարձաններից գտնված նյութերին (Լճաշեն, Աքթիկ, Էլաո, Մեծամոր, Լոռի-բերդ և այլն)։ Սակայն մաքուր ներկով զարդարված խեցեղենը համեմատաբար հազվադեպ է հանդիպում և ավելի ուշագրավ է դարձնում դամբարանի թվագրումը։

Միջին բրոնզից ուշ բրոնզ անցման փուլի (մ. թ. ա. XV դ.) սև փայլեցված խեցեղենին հատուկ են ալիքաձև զարդագոտիները, մեանդրները, ձգված եռանկյունիները և խորագիր այլ պատկերներ, որոնք լցված են սպիտակ կամ կարմիր ներկով։ Այդ տիպի հետաքրքիր նմուշներ հատկապես հանդիպում են Լճաշենում։ Հ. Մնացականյանի կարծիքով այս խեցեղենը պաշտամունքային նշանակություն է ունեցել և հատուկ պատրաստվել է թաղման ծեսի համար[21]։ Հառիճի № 85 դամբարանից (մ. թ. ա. XVI—XV դդ.) նույնպես գտնվել է այդ տիպի անոթ՝ սանրաձև դրոշմանախշով, որը պատված է սպիտակ ներկով[22]։ Հաջորդ ժամանակաշրջանում՝ ուշ բրոնզի դարի սկզբնական փուլում, ուսումնասիրվող խեցեղենը շարունակում է գոյատևել, սակայն ներկն արդեն չի լցվում անոթների տարբեր դրոշմանախշերի մեջ, այլ քսվում է նրանց իրաններին։ Անհրաժեշտ է նշել, որ զարդարման այս եղանակը առաջացել է դեռևս նախորդ շրջանում։ Հառիճի վերոհիշյալ դամբարանում գտնվել է սափոր՝ իրանի վրա սպիտակ ներկով արված մեանդրով[23]։ Զարդանախշման այս ձևը հատկապես լայն տարածում է ստանում ուշ բրոնզի դարի սկզբնական փուլում, իսկ հետագայում անհետանում է։ Մածուկային ներկով է զարդարված Հայաստանի տարբեր դամբարանադաշտերից հայտնի մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող խեցեղենը (Լոռի-բերդ[24], Շամիրամ[25], Սատունիկ[26] և այլն)։ Նույն եղանակով զարդարված խեցեղեն հանդիպում է նաև Արևելյան Վրաստանում (Պևրբրի, Զեմո-Բոդբեի դամ-

---

16 Նույն տեղում, էջ 45—46։

17 Է. Եանզագյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, աղ. XL-4, 5։

18 Ս. Եսայան, Հ. Հովհաննիսյան, Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի, Երևան, 1969, էջ 155, 166, աղ. XXXIX-10, XLV-2, 9։

19 Ս. Եսայան, Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, Երևան, 1972, № 3, էջ 117, աղ. XXXVI-13—15։

20 C. Schaeffer, Stratigraphie comparée et chronologie de l'Asie Occidentale, London, 1948, fig. 113—4,9.

21 Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները (ՊԲՀ, 1965, № 2, էջ 105—108)։

22 Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 120։

23 Նույն տեղում։

24 С. Деведжян, Лори-Берд I, Ереван, 1981, табл. XIV—XV.

25 Գ. Արեշյան, Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տարեգրությունը («Զեկուցում ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1985 թ. ապրիլի դիտական նստաշրջանում»)։

26 Պեղումները՝ Ն. Ենգիբարյանի։ Նյութերը հրատարակված չեն։

բարաններ) և նույնպես վերաբերում է մ. թ. ա. XIV—XIII դդ.[27]։

Մածուկային ներկով զարդասախշերը քսվում էին անոթների մակերեսին դրանց թրծումից հետո բավական կոպիտ կերպով և հաճախ ծածկում էին փորագիր ու փայլեցված նախշերը, ստը, որ ուսումնասիրվող խեցեղենը հայտնի է միայն դամբարաններից, կարելի է ենթադրել, որ դրա նախշազարդումն արվել է անմիջապես թաղումից առաջ և թաղման ծեսի մասն է կազմել[29]։ Հավանաբար, ուշ բրոնզի դարի վաղ փուլում թաղման համար օգտագործվել են ոչ միայն



Աղյուսակ 2. Վերին (կրկնակի) թաղման նյութերը։

ռոնք արվում էին անոթների պատրաստման ժամանակ և լիովին ավարտված տեսք էին տալիս դրանց։ Ինչպես նշում է Կ. Պիցխելաուրին, Զեմո-Բողբեից գտնված խեցեղենի վրա սպիտակ ներկով արված զարդանախշերը պահպանվել են մասնակիորեն, քանի որ քսվել են անոթի թրծումից հետո[28]։ Նույն պատկերն է դիտվում նաև Քարաշամբի մի քանի դամբարաններից հայտնաբերված խեցեղենի վրա։ Պարզ է, որ թրծումից հետո մածուկային ներկով արված նախշերը չէին նարող երկար պահպանվել անոթների ամենօրյա օգտագործման դեպքում։ Այդ զարդանախշերի իմաստը խոսում է դրանցով պատված անոթների ծիսական նշանակության մասին։ Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև այն փաստ, որ ուսումնասիրվող խեցեղենը հայտնի է միայն դամբարաններից, կարելի է ենթադրել, որ դրա նախշազարդումն արվել է անմիջապես թաղումից առաջ և թաղման ծեսի մասն է կազմել[29]։ Հավանաբար, ուշ բրոնզի դարի վաղ փուլում թաղման համար օգտագործվել են ոչ միայն հատուկ ծիսական նպատակներով պատրաստված, այլև այդ նպատակներին հարմարեցված անոթներ։

Ուշագրավ է այն, որ Հայաստանի որոշ բրոնզեդարյան թաղումներում հայտնաբերված մարդկային կմախքների վրա պահպանվել են օխրայի հետքեր[30]։ Բացի այդ, նույն ժամանակաշրջանի դամբարաններից հայտնի են թաղման արարողության ընթացքում զոհաբերված խոշոր և մանր եղջերավոր անասունների ներկված ճանկեր[31]։ Այս փաստերի զուգադրումը հիմք է տալիս ենթադրելու, որ որոշ կարգի ննջեցյալները և նրանց պատվին զոհաբերված իրերն ու կենդանիները օծվում էին։

---

27 К. Пицхелаури, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, с. 40.

28 Նույն տեղում։

29 Նույն կարծիքն է հայտնել Գ. Արեշյանը վերոհիշյալ գիտական նստաշրջանում։

30 А. Мнацаканян, Археологические раскопки на осушенной территории оз. Севан (СА XXIII, 1955, с. 196); նույնի՝ Раскопки курганов..., с. 151; С. Деведжян, նշվ. աշխ., էջ 27։

31 Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 141.

Այս զուգահեռների քննարկումը հնարավորություն է տալիս Քարաշամբի № 117 դամբարանի հիմնական (առաջին) թաղումը թվագրել ուշ բրոնզի դարի վաղ փուլով՝ մ. թ. ա. XIV—XIII դդ.։

№ 117 դամբարանի վերին, կրկնակի թաղման խցի մեջ գտնվեցին երեք ննջեցյալի կծկված կմախքներ։ Նրանցից մեկը արևելյան պատի մոտ էր, դեմքով ուղղված հյուսիս-արևմուտք։ Նրա շուրջը տեղադրված էին կավանոթները, որոնց տակ էլ բացվեցին մյուս երկու կմախքները։ Դրանցից մեկը արևմտյան պատի մոտ էր, դեմքով ուղղված արևելք, իսկ ոտքերով՝ դեպի առաջին ննջեցյալը։ Երրորդ կմախքը գտնվում էր խցի կենտրոնում։ Սրանց մոտ ևս դրված էին տարբեր կավանոթներ։ Դատելով կմախքներից, թաղված են եղել մի երիտասարդ կին և երկու տղամարդ։ Կրկնակի թաղման այս ձևը նոր երևույթ է։ Հայտնի է, որ Հայաստանում և Անդրկովկասում գտնված կրկնակի թաղումով դամբարաններում երկրորդ թաղումը, որպես կանոն, կատարվում էր հիմնական դամբարանախցում, ընդ որում, հիմնական թաղումը մնում էր երկրորդի տակ կամ նրա կմախքն ու ուղեկցող նյութը հավաքվում էին խցի որևէ անկյունում և աղտոտված հատակի վրա կատարվում էր երկրորդ թաղումը։ Սակայն № 117 դամբարանախցի մեջ քարե պատ և հատակ շարելու միջոցով կառուցվել է ավելի փոքր չափերի մի նոր խուց։

Երկրորդ թաղմանն ուղեկցող նյութը բաղկացած է երկաթե երկու մանգաղներից, դանակից և բազմատեսակ կավանոթներից։ Մանգաղները կրկնում են բրոնզե համանման մանգաղների ձևերը՝ թեթևակի կորացած աշխատող մասով, լայնացող մեջքով և նեղ շեղբով, կոթառի հետ ամրացվող ելուստով (աղ. 2, նկ. 3, 4)։ Դանակն ունի նեղ և ուղիղ շեղբ՝ մեկ կողմանի սայրով ու սուր, թույլ կեռած ծայրով (աղ. 2, նկ. 2)։ Նմանատիպ գտածոները հատուկ են վաղ երկաթի դարաշրջանին և հաճախ հանդիպում են Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում՝ (Արթիկի դամբարանային կոմպլեքսների երրորդ խումբ[32], Լոռի-Փամբակ[33] և այլն)։

Երկրորդ թաղման խեցեղեն կազմում են սև և գորշ թույլ փայլեցված, անկանթ և միականթ, ուռուցիկ կամ ձգված իրաններով, ցածր վզով և լայն տափակ հատակով սափորները՝ զարդարված խորադիր հորիզոնական գծերով, ստվարագծված շերտերով և մատնեքներով (աղ. 2, նկ. 1, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 13), երկկանթ ուռուցիկ իրանով թաղարը, սև փայլեցված միականթ քրեղանը (աղ. 2, նկ. 7) և թեք մատնեքներով զարդարված միականթ գավաթը (աղ. 2, նկ. 12)։ Վերը թվարկված անոթները, ինչպես և մետաղյա իրերը, իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում (Ռեդկին Լադեր, Արթիկ, Աստղի բլուր, Մեծամորը, Կարմիր բլուր, Մեղրաձոր, Սարուխան, Սասունիկ և այլն) և թվագրվում են մ. թ. ա. X—IX դդ.։

Այսպիսով, Քարաշամբի դամբարանադաշտի № 117 դամբարանի ուսումնասիրությունը ծանոթացնում է կրկնակի թաղումով դամբարանի նոր տիպի կառուցվածքին և տալիս է ուշ բրոնզի ու վաղ երկաթի դարի հարուստ նյութ։

ՎԱՀԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՖԻԼԻՊՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

---

[32] Г. Арешян, Орудия труда Артикского могильника (ՊԲՀ, 1970, № 3 էջ 258).

[33] Т. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении («Труды Государственного музея истории Армении», Ереван, 1959, № 5, с. 224).